ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆ, ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ, ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Ա

Կարապետ Եզյանի ընտանիքը, վաղուց Հաշտարխանից տեղափոխված լինելով, վերաբնակություն էր հաստատել Մոսկվայում։ 1859 թվին այդ ընտանիքը բաղկացած էր մորից, ծերացած մորաքրոջից, երկու եղբայրներից՝ Կարապետ և Հովհաննես և երկու քույրերից՝ Մարիամ ու Աննա։

Հարությունի որդի Կարապետն ուսանել է Լազարյան ճեմարանում, որտեղ և գիմնազիական միջնավարդ ուսման դասընթացն ավարտելուց հետո (1850-1851 թ.), իր համար որպես մասնագիտություն ընտրելով արևելագիտությունը՝ հատկապես հայոց լեզուն, մտել է նույն ճեմարանի Արևելյան լեզվաց «Լիկեոնական» կոչված մասնագիտական դասարանը։

Հաջողությամբ ավարտելով Լիկեոնական դասընթացը (1852-1853 թ.), նա փոխադրվում է Պետերբուրգ և կանդիդատության քննություն բռնում համալսարանի արևելյան բաժնում, ուր հայոց լեզվի պրոֆեսորն էր հաշտարխանցի Մկրտիչ Բերոյանը։ Այնուհետև նա պատրաստվում է մագիստրոսության քննության, որի համար գրում է «Հին Հայաստանի ներքին կենցաղը» խորագրով գիտական շարադրությունը (Внутренний бытъ древней Армении)։ Չնայած այդ աշխատությունը բուն աղբյուրներից քաղված զուտ գիտական աշխատություն չէր, այլ համարյա ամբողջապես փոխառված էր Ինճիճյանի հայտնի «Հնագիտութիւն» գրքից, բայց և այնպես նա հաջողությամբ պաշտպանում և արժանանում է «Արևելյան լեզուաց մագիստրոս»-ի կոչման (1860թ)։

Նա մտադիր էր Մկրտիչ Բերոյանից հետո՝ նրա տեղը համալսարանի արևելյան բաժնում ինքը գրավել. ուստի երբ 1860 թվին ադյունկտ՝ Բերոյանը ծերության պատճառով հրաժարվում է պաշտոնից, նա իսկույն շտապում է խնդրամատույց լինել համալսարանի ֆակուլտետին, որպեսզի իրեն հանձնեն նրա պաշտոնը։

Այդ պաշտոնին տիրանալու համար նրան մրցակից էր հանդիսանում Ստավրոպոլի Պատկանյան Տ. Պետրոս քահանայի որդի, Հարություն Վարդապետ Ալամդարյանի թոռ՝ Քերովբե Պատկանյանը, որը 1857 թվին Պետերբուրգի Մանկավարժական ինստիտուտի պատմական գիտությունների բաժինը ավարտելուց և ապա երկու տարի էլ Թիֆլիսում ուսուցչի պաշտոն վարելուց հետո, 1859 թվից ընդմիշտ փոխադրվել էր Պետերբուրգ ու իրեն նվիրել պատմության ու լեզվագիտության ուսումնասիրման գործին։

Իրավունքի տեսակետից առաջնությունը կամ առավելությունը պատկանում էր Եզյանին, որովհետև նա թե՛ կանդիդատի և թե՛ մագիստրոսի կոչում ուներ, մինչդեռ Պատկանյանը նույնիսկ կանդիդատի կոչում էլ չուներ. նրա թեկնածվության վրոմնակից էր նաև Ազգային Լուսավորության նախարարությունն՝ ի դեմս Հովհաննես Դելյանյանի, որն այդ ժամանակ Ս. Պետերբուրգի ուսումնական շրջանի հոգաբարձուն էր։ Սակայն ընտրության իրավունքը պատկանում էր ֆակուլտետին, որը դիմելով Մկրտիչ Էմինին և նրա կարծիքը հարցնելով երկու մրցակից թեկնածուների արժանավորության մասին, նպատակավոր վարձիք էր ստացել հոգաբարձու Պատկանյանի։ Այսպիսով ընտրվում է Պատկանյանը։

Կորցնելով այդ պաշտոնին տիրանալու հույսը և յուր մասնագիտության համապատասխան մի ուրիշ պաշտոն էլ չգտնելով, նա դառնում է աստիճանավոր, առաջին հերթին ծառայության մտնելով Ներքին Գործոց նախարարության դեպարտամենտներից մեկը։

1860 թվին նա բաց է անում մի մասնա-

վոր պանսիոն, հատկապես գիմնազիաներն ավարտած հայ երիտասարդների համար. որպեսզի նրանք այդտեղ պատրաստվելով հնարավորություն ունենան համալսարան մտնելու, քանի որ այդ ժամանակները գիմնազիաներն ավարտողները տակավին արտոնություն չունեին անմիջապես համալսարան մտնելու, այլ պարտավոր էին նախապես դրա համար, սահմանված քննության ենթարկվելու համալսարանում։ Դրա համար նա վարձում է մի բնակարան և իր ընտանիքը փոխադրում Պետերբուրգ. այստեղ էր նաև նրա եղբայրը, որը 1859—1860 թվին նույնպես ավարտած լինելով Լազարյան ճեմարանի միջնակարգ դասընթացը, մտել էր համալսարանի բժշկական բաժինը։ Հետագայում նա ավարտելով բժշկապետ է դառնում։

Եղյանի պանսիոնում հավաքվում են մոտավորապես 10—12 աշակերտ, որոնցից յուրաքանչյուրը վճարում էր նրան տարեկան 800 ռուբլի, որպես ուսման, բնակարանի և սննդի ծախք. աշակերտները նրա մոտ ապրում էին շատ լավ. թե բնակարանը, թե նիստ ու կացն. թե սնունդը և թե նրանց հետ վարվելու ընտանեկան ու սիրալիր ձևը գոհացուցիչ էին, և այդպես էլ շարունակվեցին մինչև վերջը։ Այդ պանսիոնում են գտնվել երևանցի հայտնի փաստաբան Ռուբեն Զաբելյանը, «Փորձ»-ի խմբագիր Աբգար Հովհաննիսյանը, Երևանի քաղաքային բժիշկ Լևոն Տիգրանյանը, Հաղբատայրանցի երկու եղբայրներ՝ Մկրտիչ և Կարապետ Էդիլյանները, Մոզդոկցի Միքայել Բուրջալյանը, պետերբուրգցի Գրիգոր Բուդաղյանը, մոսկվացի երկու եղբայրներ՝ Մեհրուժան և Արշակ Խալաթյանները և ուրիշներ։

Դասատվությունը վանոնավոր էր. ինքն Եղյանը դասավանդում էր պատմություն և աշխարհագրություն. մյուս առարկաների համար հրավիրվել էին մասնագետ ուսուցիչներ։ Հսկողությունն աշալուրջ էր և կատարվում էր իր՝ Եղյանի, նրա ընտանիքի անդամների և երկու առանձին վերակացուների միջոցով, որոնցից մեկը գերմանացի Օտտենն էր, որ տիրապետում էր նաև ֆրանսերեն լեզվին, իսկ մյուսը համալսարանի վերջին կուրսի ուսանող վաղամեռ Մարտիրոս Սիմոնյանցը. (հետագայում լավահամբավ ուսուցիչ Ներսեսյան դպրոցում և Գևորգյան ճեմարանում)։ Բայց ամենալավ հսկողներն էին Եղյանի մայրը (Մամիկոնն) և քույրը՝ Աննան, որոնք իրենց հարազատների պես սիրում էին աշակերտներին ու փոխադարձաբար սիրվում նրանցից։

Եղյանը շատ հմուտ մանկավարժ և վարպետ ուսուցիչ էր։ Բժ. Լևոն Տիգրանյանը, որը ինն տարեկան հասակում Թիֆլիս տեղափոխվելով և այդտեղ 6—7 տարի մասնավոր պանսիոններում, զանազան դպրոցներում և այլ մասնավոր՝ հայ, ռուս ու ֆրանսիացի ուսուցիչների և վարժուհիների ձեռքի տակ սովորելուց հետո, 16 տարեկան հասակում, համարյա բոլորովին տգետ, եկել էր Պետերբուրգ և իր քեռու՝ Մկրտիչ Սանասարյանի միջոցով 1859 թվին, նախքան պանսիոնի բացումը, տեղավորվել Եղյանի մոտ ուսման համար՝ տարեկան 1200 ռ. վճարով, նրա դասավանդության մասին իր «Հիշատակարան»-ում պատմում է հետևյալը. «Պետերբուրգում երկու շաբաթ մնացի քեռուս մոտ, որ ապրիլի 25-ին 1859 թ. տվեց ինձ Կարապետ Եղյանի մոտ սովորելու. դա այդ միջոցին մագիստրոսի քննություն էր տվել և պատրաստում էր յուր դիսերտացիան և դարձավ մագիստր արևելյան լեզվաց գիտության... Եղյանը շատ վարպետ մարդ էր կրթության գործում։ Նա ինձ հետ վարվեց շատ մեղմ, ընկերաբար, որպես սիրող մեծ եղբայր. ամեն օր երեկոյան գնում էինք զբոսնելու և այդ միջոցին ինձ ամեն բան ցույց էր տալիս, բացատրում էր, (սոկրատական ձև), աշխատում էր հարուցանել իմ մեջ հետաքրքրություն գիտության վերաբերմամբ և ընտելացնել աշխատասիրության. երկու շաբաթվա ընթացքում ինձ այնպես ոլորեց, որ ես սկսեցի մեծ ջանքով պարապել և աշխատել. սովորեցրեց բառարան (ռուս-հայ) գործածելը։ Երբ սկսեցի հին պատմություն սովորելը, նա առաջին դասս (բարելոնացիք) հարցնելիս տեսավ, որ լավ եմ պատմում և հասկացավ, որ անգիր եմ սովորել։ Այն ժամանակ բացատրեց, որ չպետք է անգիր սովորել, այլ պատմել։ Այդ առաջին անգամն էր կյանքումս, որ ռուսերեն կարդացածս պետք է պատմեի, այն ինչ պատմելու նաև ձևը չգիտեի։ Այդքան էր Թիֆլիսից բերած դիտությունս։ Եղյանի մոտ հենց սկզբից սկսեցի շատ աշխատել և երբ երեկոյան պահին ինձ ուզում էր ման գալու տանել, ես չէի ուզում գնալ, ասելով թե ես սովորելու բան ունեմ։ Ես ամբողջ օրը պարապում էի և ինքս զարմանում էի, թե ինչ է պատահել ինձ, որ ամեն ինչ ինձ հետաքրքրում է։ Իմ մեջ ծագեց ցանկություն Եղյանի նման գիրք կարդալ և առաջին գիրքը, որ կարդացի, էր Պոլ և Վերժինե (հայերեն թարգմանություն), որ կիսատ էի հասկանում և շատ բան Եղյանից հարցնում։ Այդ գիրքը ինձ վրա շատ մեծ տպավորություն թողեց. հետո կարդացի ռուսերեն լեզվով «Робинзон»-ը։ Նա կարդում էր ինձ Լերմոնտովից. ես շատ-

հավանեցի «Բելա»-ն և նա մի օր ասեց, ուզում ես թարգմանիր հայերեն և մենք տպենք, ես կուզեմ։ Այդ այնպես գրգռեց իմ ինքնասիրությունը, որ ես իսկույն համաձայնեցի և սկսեցի։ Բայց ինչ թարգմանություն էր, թարգմանելու եղանակը չգիտեի, ռուսերեն կիսատ էի հասկանում և երբեք հայերեն բան գրած չէի։ Եզյանն ամեն օր դասին գրածս տուղղում էր, խրախուսում էր, բացատրում էր կանոնները և այլն։ Եվ ամբողջ «Բելա»-ն թարգմանեցի և տղի պես կպչում էի Եզյանի յախից, թե հիմա պետք է տպել տալ. նա ժպտալով խոստանում էր, բայց ես չէի հասկանում, որ այդ թարգմանությունը տպելու համար չէր, այլ ռուսերեն հասկանալու և սովորելու համար։ Նույն կերպ վարվեց ինձ հետ ֆրանսերեն սովորեցնելու համար։ Եվ նրան անպայման հավատում էի, զարմանում էի նրա համբերության, վարվելու քաղցրության վրա։ Նա ամենամեծ վարպետությամբ սովորեցրեց ինձ աշխատանքի, և սովորեցրեց հետաքրքրվել գիտությամբ, լեզուներով և ամեն մի լավ գործով։ Նրա հայտնած գաղափարներն ուղիղ, արդար, ազնիվ էին։ Նրա խոսքն ինձ համար սուրբ էր։

«1859 թ. հունիսին գնացինք Եզյանի հետ Մոսկվա՝ ներկա լինելու նրա մեծ քրոջ՝ Մարիա Արտեմովնայի հարսանիքին (Բողդան Վարլաամի Բողդանովի հետ, որ հայ էր)։ Այդտեղ ծանոթացա մոր, քույրերի և եղբոր հետ։ Նրանք ինձ սիրեցին և ես էլ նրանց սիրեցի։ Մենք մի ամիս մնալով Մոսկվա, վերադարձանք Պետերբուրգ։ Եզյանը սկսեց մտածել պանսիոն բանալու...»։

Եզյանը թեև հմուտ մանկավարժ, ուսուցիչ, պանսիոնի լավ կառավարիչ ու բարեխիղճ պետական ատենակալ էր, բայց բնավորության այնպիսի գծեր ուներ, որոնք նրան ծանր և անբարեհամբույր էին դարձնում առօրյա կյանքում՝ հասարակության մեջ։ Նա փառասեր էր, ինքնահավան, ջղոքորթություն սիրող, ուրիշի կարծիքի չհանդուրժող, քեն պահող, ազդեցություն ձեռք բերելու, դրջապատողներին փրան հպատակեցնելու ձգտում ունեցող. սրանք բնավորության գծեր ու հատկություններ էին, որոնք նրան հին քրմերին էին նմանեցնում, ուստի և նա ժամանակի հայ ինտերիգենտ դասի կողմից «գուրմ» անունով է կնքված եղել ու «գուրմ» է անվանվել։ Որքան մեղ հայտնի է այդ հորջորջումը առաջին անգամ Եզյանին հատկացրել է Գրիգոր Արծրունին լուր «Մշակ»-ում։ Այս բոլորի հետ միասին սակայն նա մյուս բարձր դիրք ունեցող հայ ատենակալներից տարբերվել է մի խոշոր առավելությամբ. նա Ներքին Գործոց նախարարությունից ծառայության փոխադրվելով Ազգային Լուսավորության նախարարություն և այդտեղ հետզհետե առաջ գնալով ու դրավելով Դպրոցական գործերի դեպարտամենտի փոխվերատեսչի բարձր պաշտոնը (Вице-директор департамента Министерства Народного Просвещения), որը նրան աչքի ընկնող դիրք ու կացություն էր ընծայում, մյուսների նման չի խզում իր հարաբերությունները հայ հասարակության հետ, այլ ընդհակառակը է՛լ ավելի ամրացնում է այդ հարաբերությունները, մշտական ու հարատև գործակցություն և մասնակցություն ցույց տալով հայկական բոլոր ազգային կուլտուրական ձեռնարկումներին։

Ամեն մի հայ անխտիր մուտք է ունեցել նրա բնակարանը և մինչև իսկ նրա պաշտոնատեղում ունեցած առանձնատենյակը, խոսել նրա հետ հայերեն լեզվով, առանց թաքցնելու իր կարիքները հայտնել նրան. և եթե խնդրողը հավատիքներ է մատուցել նրան իր իսկական հայ լինելու, հայ կուլտուրական կյանքին ծառայելու կամ հետագայում այդպիսի գործի պետք գալուն, Եզյանն աջակցել է նրան թե իր խորհուրդներով, թե իր պաշտոնի հետ կապված նպաստավորումներով և թե «եկեղեցական խորհրդի» տրամադրության տակ գտնված գումարներից օժանդակություն ցույց տալով, թոշակ նշանակելով. նա «եկեղեցական խորհրդի» ազդեցիկ անդամը և հետո էլ նախագահն է եղել երկար ժամանակ։

Մայրաքաղաքի ուսանողներից շատերն են վայելել նրա աջակցությունը բարձրագույն դպրոցներ մտնելուց, շատերն են ազատ եղ ու մուտք ունեցել նրա բնակարանը, վայելել նրա ընտանիքի սիրալիր հյուրասիրությունը, շատերն են պարբերաբար հրավեր ստացել մասնակցելու նրա շաբաթական «ժուրֆիքսներին», ուր շահեկան զրույցներ ու մտքերի փոխանակություններ էին կատարվում և ուր նրանք որոշ ուղղություն էին ստանում ազգային կուլտուրական խնդիրների շուրջը ու պատրաստություն ձեռք բերում իրենց ապագա ազգային գործունեության համար։

Այդ բոլորի հետևանքով հասկանալի պիտի լինի, թե ինչու Եզյանի անունն ու հռչակը իր ժամանակ այնքան տարածված են եղել հայերի մեջ, հայ աշխարհում, թե ինչու նա դարձած է եղել մի կենտրոնական անձն, որին դիմել են ամենքը, ե՛վ էջմիածինը, ե՛վ հայ ազգային գործի գլուխ կանգնած մարմինները, ե՛վ հայ մասնավոր անհատները, որոնք ի վիճակի են եղել և կամեցել են ազգի կուլտուրական գործի համար մի բան ա-

նել։ Նրա խորհուրդներով և բարոյական ու գործնական աջակցությամբ է գրվել Սանասարյանի կտակը, հիմնարկվել Սանասարյան դպրոցը Կարինում, հաստատվել Նոր-Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմական դպրոցի կայսերահաստատ հիմնական կանոնները, Նոր Նախիջևանի «Եկեղեցական հոգաբարձությունը» և այլն։

Լևոն Տիգրանյանի ասելով Եղյանը մի բարի, աշխատասեր մարդ է եղել, յուր մասին մեծ կարծիք չի ունեցել և բնավորության վերոհիշյալ վատթար գծերը կամ բոլորովին չեն արտահայտվել նրա մեջ, կամ արտահայտվել են այնքան մեղմ եղանակով, որ համարյա թե նկատելի չեն եղել, բայց հասակն առնելու և ծառայության աստիճանի հետզհետե բարձրանալու հետ միասին վատթար գծերն էլ զարգացել և հետագայում արտահայտվել են զորեղապես։ Օրինակ նա չէր կարող լսել ու տանել հակառակ կարծիքներ. նա այդպիսի կարծիքներ հայտնողների համար ուներ մի բառ, որ հաճախ և համարյա միշտ գործ էր ածում— «հիմար», որի ը տառն արտասանում էր ղ տառի հնչյունով և ծոր տալով «հիմաղղ» կամ ռուսերեն «դուրաղակ»։ Ուսանողների մի մասն անհանդուրժելի համարելով նրա բնավորության այդ և դրա նման գծերը, հեռու էր պահում իրեն նրանից, չընդունելով նրա հրամանները և շայցելելով նրա շաբաթական ժուռֆիքսները, այցելողներն էլ շուտով ճանաչելով նրան, հետզհետե հեռանում էին և մինչև վերջը մնում էին միայն նրանից մի որևէ պատճառով կախում ունեցողները։

Թե որքան ոխակալ ու քենախնդիր էր նա, Տիգրանյանը, իբրև նրա բնավորության այդ գծի ցայտուն օրինակ, իր «Հիշատակարան»-ում մեջ է բերում նրա Պետերբուրգի համալսարանի արևելյան բաժնում հայոց լեզվի ու գրականության պրոֆեսոր լինելու ձգտումը և անհաջողությունը հայտնի հայագետ Մկրտիչ Էմինի պատճառով։ Նա այդ հանգամանքը չի մոռանում և 35 տարի անցնելուց հետո, երբ պատեհ առիթը ներկայանում է, միտն է բերում ու վրեժխնդիր լինում։

«Երբ ես 1887 թվի վերջին արտասահմանից եկել էի Պետերբուրգ և Եղյանի հետ խոսում էի Պատկանյանի մասին,— գրում է Տիգրանյանը,— Եղյանը պատմեց ինձ հետևյալը. «Մի՞տդ է, որ ես էի ուզում պրոֆեսոր դառնալ և պրոֆեսորությունը տվեցին Պատկանյանին։ Այդ Էմինն արեց։ Մի քանի ժամանակ սրանից առաջ Էմինը Պատկանյանին նամակ էր գրել, խնդրելով որ նա առաջարկի ֆակուլտետին տալ իրեն դոկտորության դիպլոմ (Honoris Causa)։ Պատկանյանն եկավ ինձ մոտ, բերեց Էմինի նամակը և ասաց. թե Էմինից այսպիսի նամակ եմ ստացել։ Ի՞նչ է կամենում այդ Էմինը, նա ո՞ր աշխատության համար պետք է առաջարկել ֆակուլտետին պատվո դոքտորի դիպլոմ տալ և վերջապես նա սաստիկ ծերացել է, այսօր թե վաղը պետք է մեռնի, ուղիղն ասած չգիտեմ, թե ի՞նչ պատասխանեմ։ Եղյանը պատասխանում է, թե Էմինի նամակն փրեն տա և նա կգրի, բոլ բան է։ Պատկանյանը տալիս է նամակը։ Եղյանը ասեց ինձ. «Ահա ժամանակն եկել էր Էմինից ոխս հանելու։ Ես գրեցի Պատկանյանի կողմից մի այնպիսի նամակ, որ Էմինի ջիգարը դաղեց. տվեցի Պատկանյանին ստորագրելու և ինքս տվեցի փոստը, որ մի գուցե Պատկանյանը կարդա և չուղարկի։ Ես ի հարկե բացատրեցի Էմինի խնդիրքը, ասելով, թե, պ. Էմին, Ձեր ո՞ր աշխատության համար եք կամենում այդ դիպլոմն ստանալ առանց քննության, Դուք այնպիսի աշխատանք չունեք և այլն. շատ քաղաքավարի, բայց կծու նամակ էր։ Եթե Էմինը իմ վրա ցույց տված լիներ պրոֆեսորության համար, ես նրա հետ շատ ավելի լավ կվարվեի և ամեն միջոց գործ կդնեի, որ այդ դիպլոմը նրան տան, ի՞նչ բան է մի թղթի կտոր տալը Էմինին»։

Տիգրանյանն Եղյանին, իբրև շատ և վոնասակար հակումներ ունեցող անձի, ավելի ցայտուն գծանակով բնորոշելու ու բնութագրելու համար, մեջ է բերում նրա կյանքից նաև մի երկու-երեք դեպք, որոնք սակայն այնքան վրդովեցուցիչ ու այնքան զարհուրելի են, որ մենք դժվարանում ենք հավատալ, թե դրանք կատարված լինեն Եղյանի պես մարդու ձեռքով, ուստի այդ դեպքերը մեջ ենք բերում վերապահությամբ։ Պարտք ենք համարում այստեղ նկատել և այն, որ բժ. Լևոն Տիգրանյանը, ինչպես երևում է նրա մեր քանիցս հիշած «Հիշատակարան»-ից, իր կյանքում, սկսած 1859 թվից, երբ առաջին անգամ ուսման համար տեղափոխվել էր Եղյանի մոտ, և մինչև յուր քեռու՝ Մկրտիչ Սանասարյանի մահը (1890 թ. 5 մայիսի), այսինքն ամբողջ 41 տարի, ստիպված լինելով քեռու պատճառով կապված մնալ Եղյանի հետ, այնքան և այնպես էր տանջվել ու չարչարվել նրա ձեռքից, որ այլևս չհամբերելով, յուր աշակերտության օրերին դաղուլնի չափ դանակը ձեռքին մի գիշեր մտել էր ննջարանը՝ նրան

սպանելու նպատակով. բայց երբ դանակը բարձրացրել էր, որ հարվածի, իսկույն հիշել էր նրա մորը, իր շատ սիրած Մամիկեին. ձեռքը թուլացել էր և թողել գետացել էր ասելով. «Շուն ես, շուն էլ մնա աշխարհիս երեսին»։ Եվ այդ բոլոր տանջանքները հետևանք էին նրան, որ նա ունևոր, բարեգործ Սանասարյանի քրոջ որդին էր, քեռու մեծ կարողության ապագա ժառանգը, որին իբրև թե Եզյանը կամեցել էր ատելի դարձնելով հեռացնել քեռուց, որպեսզի ճանապարհ հարթած լինի Սանասարյանի կարողությունն իր ձեռքն առնելու և գործադրելու իր ուղածի պես։ Այսպիսի հանգամանքներում բնական է կարծել, որ ատելությամբ ապցվաս Տիգրանյանը կարող էր, չենք ասում ստել, այլ չափազանցրած լինել նրա ասածները և նրա բնավորության հոռի կողմերը։

«Եզյանի մասին,— ասում է Տիգրանյանը, մոռացա հենց սկզբում մի հետաքրքիր բան պատմել։ Երբ ես մտա Եզյանի պանսիոնը, մեր քանաստեղծ Միքայել Նալբանդյանն Եզյանի հետ դոստ էր։ Երբ նրան բանտարկեցին, Եզյանը հաճախ գնում էր բանտը, նրան տեսնելու։ Երբ վերջին անգամ բանտում խոսեցրել էին Նալբանդյանին, նրան հայտնել էին նրա այնպիսի գաղտնիքները, որ նա ակամա ապշած մնալով ասել էր. «Այդ բոլորն ստոյգ է, բայց ես ոչ ոքի այդ գործերի մասին չեմ հայտնել, դուք ո՞րտեղից գիտեք։ Այդ ժամանակ «երրորդ ադելենիումն» էլ կային ազատամիտ մարդիկ, որոնք ծածկաբար ասել էին Նալբանդյանին, որ նրա սրտակից բարեկամ Եզյանն է այդ «դանոսն» արել։ Եզյանն այդ ժամանակները դեռ ծառայում էր Ներքին Գործոց նախարարությունում։

«Երբ Նալբանդյանին բանտից արձակեցին (շաբաթ օր էր), կիրակի օրը նա ըստ սովորության եկավ եկեղեցի։ Երբ եկեղեցուց հետո, բակումն Եզյանն ինձ հետ միասին մոտեցավ Նալբանդյանին բարևելու, Նալբանդյանը կատաղաբար նրա վրա նայելով, մի քանիսի և իմ առաջ ասեց Եզյանին. ах! ты подлец, շանաղբ, ամո՞թ է քեզ հետ ծանոթ լինել, անպիտան լրտես։ Ես այդ գործի վրա իմ պատմած մանրամասնությունները լսեցի Մովսես Բուդաղյանի մոտ, երբ ես գնացել էի այնտեղ. խոսակցությունը Բուդաղյանի և Նալբանդյանի մեջ էր։ Դրանից հետո Եզյանը և Նալբանդյանը, ի հարկե, այլևս ծանոթներ չէին։ Մի օր էլ Եզյանը խոսելով Սանասարյանի հետ, իմ առջևը արդարանում էր այդ գործում։

«Մի այլ հետաքրքիր բան Եզյանի մասին, —գրում է Տիգրանյանը.— Գևորգ կաթողիկոսն աշխատում էր վիճակավոր եպիսկոպոսների մի քանի իրավունքները իր ձեռքն գցել, որոնք իսկապես պատկանում են կաթողիկոսին։ Կաթողիկոսը գրագրություն ուներ Ներքին Գործոց նախարարի հետ այդ իրավունքների մասին։

«Այդ ժամանակ աշտարակցի Վեհապետյան Գևորգ արքեպիսկոպոսը Հաշտարխանի առաջնորդ էր և Գևորգ կաթողիկոսի հետ կաթողիկոսության կանդիտատ էր (եղել), ուրեմն պետք է կաթողիկոսին հակառակ լիներ։ Եզյանը գրում է Վեհապետյանին նամակ և հայտնում, որ կաթողիկոսը կամենում է նրա առաջնորդական իրավունքները սեփականացնել և խորհուրդ է տալիս հակառակել կաթողիկոսին։ Ուղարկում է խնդիրքի սևագրությունը, որ Վեհապետյանն արտագրել տա, ստորագրե և ուղարկե նախարարի հասցեով։ Այդ միջոցին Պերճ Պռոշյանը այդտեղ է լինում։ Եպիսկոպոսը կանչում է Պերճին և ասում. «Պերճ, մի տես Եզյանը ի՞նչ է գրում, ես բան չեմ հասկանում»։ Պերճը կարդում է և հասկացնում։ Եպիսկոպոսն ասում է. «քավ լիցի, ես այդպիսի գանգատ չեմ տա կաթողիկոսի վրա։ Եզյանի ցանկությունն էր, երևի, մի խաչ ստանալ, կամ տեղը շաղացնել»։

(Շարունակելի)